



ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ
ՏԱՍՆԵԻՆԻՆԻ ՏԱՐՈՒԱՆ ՄԷՋ
(1894-1910)

Կեանքի, զործունեութեան, զարգացման հետ ամենամեծ չփում ունի պարբերական մամուլը: Քաղաքագէտը, Գրագէտը Մամուլին միջոցով կը ճառագայթէ իր գաղափարները մինչև հեռուոր գիւղերը: Մենք փոքր ազգ մ'ըլլալով՝ աւելի ընտանիքի մը դիրքը ունինք և կը հետաքրքրուինք ամենափոքր ղէպներով: Անդդիսցւոյն, Ֆրանսացւոյն համար ծագրական չէ մտածումով հարցնելն իսկ թէ իր լեզուով որքան գրքեր տպուած են և իւրաքանչիւրը քանի՜ երրորդ տպագրութեան արժանացած, թէ որքան լրագիր և Հանդէս հրատարակուած են, են են: Իւսակայն միւր դիրքը կը ներէ մեզ որ ունենանք Մատենագիտութիւն մը՝ ուր նշանաւորին ոչ միայն գրքեր, այլ ութիկայ տեսարկներ և անոնց վրայ եղած մատենախօսութիւնները են են: Իւս այդ պարագան էր որ Հայ լրագրութեան յորեկանին (1794-1894) ղՀ. Գրիգորիս Դ. Վ. Գալէմբեհարեան մղեց գրելու «Պատմութիւն Հայ Լրագրութեան»ը, զորմ մը գնահատելի, և որ զբարիտաբար ամբողջութեամբ լոյս չտեսաւ: Միեւնոյն ժամանակ մեր Ռուսահայ եղբայրներէն Պ. Գարեգին Զ. Լեոնեան 1894ին Սահակ-Մեղրովպեան Մրցանակի Բանձնաժողովին կը ներկայացնէր «Հայոց Պարբե-

րական մամուլը» երկը և որ վարձատրուելէ ետք հրատարակուեցաւ ՂԱՂԵՔԱՆԴՐԱՊՈԼ 1895ին:

Ըստ այդ հրատարակութեան՝ հարիւր տալուան մէջ 173 լրագիր և Հանդէս ունեցեր է Հայ ազգը (ի բաց առնելով 17 հատ տաճկերէն - հայաստա - լրագիրները):

Ահա տասնհինգ տարիներ անցած են այդ թուականէն ի վեր և մենք այս փոքր շրջանին մէջ լրագրաց բազմաթիւ նորանոր աշուններու մէջ ողողուած ենք. այս փոքր շրջանին մէջ լրագրութեան ծաւալման ազգու գարկեր տուին Համիտի բռնակալ քաղաքականութիւնը, Ռուսաստանի Տոման, և Օսմանեան երկրին ամենաթաւրմ Սահմանադրութիւնը:

1895 թուականը տաճկահայ կրթուած Հայ դասակարգը Ռտասահման քննց և ուր որ Հայ գաղութ մը կար՝ հոն կար նաև Հանդէս մը կամ լրագիր մը: Երբ Ռուսաստանի մէջ Մամուլ պատմութիւն շնորհուեցաւ՝ աւելին գրող ուզեց խմբագիր յորդյորջուիլ և սկսան օրէ օր հրապարակել իւր նորանոր լրագրեր և հանդէսներ - հոգ չէր թէ անոնք ընդ փոյթ պիտի դադրէին, և շատեր ալ դեռ չհրատարակուած դադրեցան: 1908ը ամենէն աւելի ազգեց Օսմանեան երկրի Հայ պարբերականին վրայ: Երբ Սահմանադրութիւնը լոյն համբաներ բացաւ Արասահմանի հայերէն Տոման հրապարակուեցաւ: Ամերիկայէն, Եգիպտոսէն, Պուլղարիայէն գրողներ և ընթերցողներ, խմբագիրներ և

տնօրէններ Պոլիս շտապեցին քանի որ ո՛չ մի սպանալիք իրենց գրիչը չէր բռնել։ Եւ ստեղծեցին արդէն Պոլսոյ և շրջակայից գրաւ-գետները որոնք տասնեակնեց տարի գրաւ-քննութեան սպառնալիքներուն դիմաց կը միտային իրենց մէջ մեղսեցնելով Գաղափարը, երբ Մաշմախարութեան ձայնը լսեցին՝ առաջին անգամ Մամուլոյ ազատութիւնը վաճակեցին և ահա ընթերցողներէ աւելի իրմբագրներ երևան եկան և բառ չմնաց որ թերթի մը անունը չըլլար, բայց վասն զի շտապը ոչ նիւթական և ոչ գիտական ուժ ունէին՝ ասոր համար շատ շուտ տեսան իրենց թերթերուն մահերը։

Ահա ուրեմն շրջան մը հայ պարբերական Մամուլին որ արժանի է ուսումնասիրութեան մը, քանի որ ան իր մէջ կը բովանդակէ հայ ազգին արցունքը և ժպիտը (1895 - 1909) քանի որ իր մէջ ունի անխժող և օրհնող երգիչներ, քանի որ այդ շրջանին - Ռուսահայք մանաւանդ ընծայիցին ամենապատուական և լուրջ Հանդէսներ, քանի որ այդ շրջանին քաղաքական միջոցով քննադատութիւնը եկաւ լոյս պիտելու ազգային մատենագրութեան և պատմութեան վրայ։ Պէտք է որ այս փոքր շրջանին հայ պարբերական Մամուլին պատմութիւնը, հակիրճ տեսու թիւններով մեր առջև ունենանք։

Վասնզ և՛ որ ամէն հայ անհատ երբ Արտասահմանէն իր ծննդավայրը, իր օձախին մօտ վերադարձաւ՝ փափագեցաւ տառապաւ լից այս սասնակէնց տարիներու հայ կեանքին տեղեակ ըլլալ, ճանչնալ իրեն անձանօթ միացած գրագէտները և վերջապէս բանալին ունենալ այն կղզուած սրահին՝ որուն ներսը կայ հայ կեանքը թատերաբեմի վրայ, այդ բանալին է որ պիտի սանձ թէ՛ Ռուսահայուն, թէ՛ Տաճկահայուն և թէ՛ Արտասահմանի և անկից վերադարձող հայուն։

Ա.

1894-1909

Երբ Հայ Պարբերական Մամուլին յորելեանը կը տօնուէր 1894ին՝ ուսումնասիրողը հարիւր տարուան մէջ մեզի 173 լրագիր ներկայացուցին, լոյս տեսած և դադրած այդ շրջանին, վերջին տարին՝ այն է 1893, հայ ազգը մի միայն 26 լրագիր ունէր, ըսել է 149 հատը իրենց ժամանակին արդէն դադրեր էին։

Այդ քսան և վեց լրագիրներէն հինգը Արտասահմանի, տասը հատ Ռուսաստանի իսկ տասն և մէկ հատ Տաճկաստանի մէջ լոյս կը տեսնէին։

ա.

ԱՐՏԱՍՍ.ՀՄՍ.ՆԻ ՄԱՄՈՒԼԸ

Թիւ 1. Բագմավէպ

Արտասահմանի և ընդհանուր հայ լրագրութեան մէջ ամենէն տարեցն էր Բագմավէպը որ ճիշդ յիսուն տարին կը թեւ-

կոխէր (1843-1893)։

« Բագմավէպ »-ը՝ օրկանն է Վենետիկոյ Մըխիթ. Միսրանութեան և որ իր ընթացքին մէջ ժամանակի բերման համեմատ՝ համաձայնած է հայ ժողովրդի դեան պէտքերուն։



Գ. Գ. Ավագովսկի

« Բագմավէպ »-ի հիմնադիրն եղած է Հ. Գարբիէլ Վ. Ավագովսկի, որուն յաջորդած են ցայսօր մօտաւորապէս քսան և հինգ խմբագիրներ։

*

1894-95 « Բագմավէպ »-ի խմբագրութիւնը կը վարէր Հ. Ե. Տայեցի, յօդուածագիր ունենալով Հ. Ալիշան՝ որ յօդուած-

ներէ աւելի գրեցր կու տար, և ահա այդ շրջանին մաս առ մաս լոյս տեսան « Հին Հաւատք Հայոց » (1894-5) և « Հայկական բուսաբանութեան » վերջին մասերը, որոնք երկուքն առանձինն հրատարակուեցան։

Այսպէս նաև Հ. Գարեգին Վ. Զարպհանալեան « Հայկական լեզուի ուսումն յեւրոպա » յօդուածաշարը և 1895ին « Հայկական տպագրութեան պատմութիւն »։



Հ. Բարսեղ Սարգիսեան՝ Նախնեաց հրա-
տարակութիւններով խառնուած ընդարձակ
յօդուածներ կը հրատարակէ ինչպէս «Մե-
ծին Ներսիսի ընծայուած մարգարէութեան
յոյն բնագիրն» և անոր վրայ եղած կըր-
կին խմբագրութիւնը», — «Պատմու-
թիւն Ս. Սիդորատուրի համեմատութեամբ
հայերէն և յունարէն թարգմանութեանց»,
— «Պրոկղ իմաստասիրի աստուածաբանա-
կան շաղկապաց թարգմանութեան խնդիրն
և մատենադարանիս թիւ 1123 գրչագրի
գաղտնիքն» — «Քննադատութիւն քննա-
դատութեան Ա. Կարբէրի, և Խորենաց-
ւոյ Ե. դարու բնագործը», Հ. Յ. Թորոսեան՝
բանասիրական թղթակցութիւններ
ունի և Գեղեցիկ «Հայք և Դիցաբանու-
թիւն Հայոց» գործը կը թարգմանէ: Հ.
Վ. Հացունի՝ «Բան ի Ս. Թարգմանիչ»
«Յ գրոյն Հնչումն». 1895ին՝ «Ապահար-
զան», «Հոյրներէի քարոզած ապահար-
զանն», իսկ ի Նախնեաց՝ հրատարա-
կուած են Գանձեր, Ողբեր, Շարականներ,
ևս 1895ին: Շանարի «Արարատ» (ուղե-
գրութիւն) և «Բնդ Հայաստան Ռուսոյ»
ընդարձակ ճանապարհորդութիւնը: Հայա-
գէտն Ե. Տեզա «Հիւլէն իմաստասիրաց
հատընտիր խրատը թարգմանեալք ի հայ»,
— 1895ին՝ «Թղթակցութիւն Սովսէս
Խորենացւոյ վերայ»:

«Բազմավէպ»ը աւելի բանասիրականի
գոյն մ'ունէր այս շրջանին բայց և այն-
պէս գրական բաժնէն զարկ չէր. Աղամեան
Դեհասան-Ֆանաստեղծի քերթուածները կը
հրատարակուին և որ կը շարունակուին
1896ին. Հ. Ա. Տիրոյեան իր «Խաղա-
մու» թատերգութիւնը կը հրատարակէ
1895ին:

1896-7. Հ. Յ. Թորոսեանի խմբագրու-
թեան ներքե Բազմավէպը դեռ աւելի բա-
նասիրական, քննադատական և Հնախո-
սական յօդուածներով կը ճոխանայ: Հ.
Ալիշան «Պատկերասրտաց գիրք» խորագրով՝
պատկերազարդ հնաաքրքրական յօդուած-
ները կը հրատարակէ և Հ. Գ. Զարպէա-

նալեան «Հայ տպ. պատմութիւնը» կը
շարունակէ: Հ. Յ. Թորոսեան Գեղեցիկ
«Փառաստա Բուզանդ կամ Հայկ. եկեղեց-
ւոյ սկզբնաւորութիւն» գործը կը թարգ-
մանէ: Հ. Հացունի «Խորհրդածութիւնք
Եղիշէի վրայ նոր քննութեան մի առթիւ»
յօդուածներով Եղիշէն կ'ուսումնասիրէ. և
որ 1897ին ալ կը շարունակուի: Կը հրա-
տարակուի «Ուղեորութիւն Շանարի յԱ-



Հ. Գ. Զարպէամալիան

րեւելս». Գր խալաթեանց Հայկական վէպ
ի պատմութեան Ս. Խորենացւոյ». Ե.
Տեզա «Յուդիթայ գիրքը ի Հայ թարգմա-
նութեան. Հ. Ա. Ղազիկեան զբարբար կը
թարգմանէ Քարմէն-Սիւլվայի քերթուած-
ները. և Հ. Յ. Թորոսեան Յուշը Լոնդրայի
(Տէ Ամիշիս). Հ. Ե. Արրահամեան Դէնի
«Վէնետիկ»ը: «Իշխանաց կղզիք» և «Վեա-
տեան Կոյս» վէպերը:

Բազմավէպը 1897ին թէև իր գլխաւոր
ծրագիրը չի փոխեր բայց և այնպէս յօ-
դուածներու զանազանութեամբ նոր փայլ
մը կ'առնու, և «Սուրհանդակ Բազմավէ-
պի» նոր բաժինով մեծ աղմուկ կը յա-
րուցանէ բանասիրական հրապարակին վր-

բայ, Հայկական բաժինը մեծ տեղ կը զբաւէ. և կը ստորաբաժանուի: Բանասիրական բաժինն մէջ կ'երևան հետեւեալները Հ. Բ. Սարգիսեան «Խազումն հայ տառից».

— «Սոկրատայ հին թարգմանութեան հրատարակութիւնն և Մովսէս Խորենացի»:

Հ. Ալիշան «Հեղինակ Աղուանից պատմութեան»:

Հ. Թ. Թորոսեան «Ինչ առնչութիւն կայ հին հայագրի Պաղիկեանց և այժմու կաթողիկեայ Բուլղարաց մէջ».

— «Համառոտ տեսութիւն Կորեան և իւր զրու-



Հ. Բ. Նիսենց

թեան վերայ».

— «Թատրոն առ նախնի հայս».

— «Նկարչութիւն և ճարտարապետութիւն մեր նախնեաց ժամանակ».

— «Քրիստոսի ծննդեան տօնն ըստ սովորութեան հայկ. եկեղեցւոյ» (Հոն՝ ևս Հացունին Հ. Վ.).

— Եւ թարգմանութիւն Գեղեցիկի «Դիցարանութիւն Հայոց»ին:

Հ. Վ. Հացունի «Ե՛րբ ո՛չ, ո՛ր, ի՛նչ և ե՛րբ յի՛».

— «Հայկական եկեղեցւոյ երգերն».

— «Շարականը (Լիբրառութիւն սեկեղ. հայ.)».

— «Տարւոյն երկոտասան ամսոց անուանը».

— Ուղղագրութիւն չ ժխտականին, վերայ բառին և յ զրոյն առ նախնիս»:

Հ. Ս. Էփրիկ. «Վանայ ծովակի կղզիներ — Աղթամար».

որ կը շարունակուի նաև 1898ին:

Բացի միաբաններէն բանասիրական բաժնոյն կը մասնակցէին նաև Արտաքին յօդուածագիրներ ինչպէս Կ. Բ. Բաամա ջեան «Յարալէզը».

— «Թղթակցութիւն բեկեղազրաց մասին».

— «Տոսպական արձանագրութիւն Մանագլեքտի»:

Խ. Յովհաննիսեան «Մովսէս Խորենացի ըստ բեկեղազի արձանագրութեանց».

— Բրգմ. «Բեկեղազի արձանագրութիւններ Ռուսաց Հայաստանում»...

Հ. Բ. Աճառեան «Մովսէս Կաղանկատուացի, քննութիւն անոր գրութեան ժամանակին վերայ».

— Քննութիւն և համեմատութիւն Զէյթունցի աւանդական պատմութեան մը. Գողթնի պատմութիւնը».

Եւ ուրիշներ՝ որոնք պատասխանած են Բագմավէպի Սուրհանդակին:

Պատասխանուած են հետեւեալ նիւթերուն «Ազգային մեծ մատենագիր մը. — Ազգերնու մէջ բառարանաց յաճախութիւն. — Անուանը հայկ. ամսոց. — Աշխարհարարի և զրաբարի խնդիր. — Խոյր կամ միար. — Տառադարձութեան խնդիր»:

Իսկ թովմաս Թերզեան կը սկսի իր մէկ հրաշալի գործը «Գեղեցկագիտութիւն» որ և կը շարունակուի յաջորդ տարին:

Հ. Մ. ՊԱՏՈՒՐԵԱՆ
Շարայարկի

Ուրիշ բան է գործվանքը՝ ուրիշ բան է բարեսրտութիւնը. (Թումազեայ):

Պարտքը կատարէ և մի՛ վախեր:

Մարդ դիւրաւ կը միտէ շարունակեան կողմը և դժուարաւ կը հետեւի բարւոյ:

Հոգին սուրբ չի մտնար այն տունը՝ ուր կոխ, խռովութիւն և ատելութիւն կայ. (Ս. Ֆր. Ալ):

Անկեղծ մարդը՝ ոսկի է:

Գիտուն և Աստուածապաշտ անձը՝ ազամանդ է:

Ուրախ զուարթ երեկոյթին՝ տխուր առաւօտ կը յաջորդէ. (Թովմ. Գեմբ):

Կոպտութիւնը՝ աւելի տգիտութիւն է, քան թէ հպարտութիւն: